



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«01» փետրվարի 2024 թվականի N 77

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՄԻԼԻՈՆԻ ՓՈՂՈՑ
ԹԻՎ 99 ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՍՑԵՈՒՄ ՈԼՈՐՏԻ ՕԲՅԵԿՏ ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏԵՎՈՂ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՃՇՏՎԱԾ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐՈՎ ԵՎ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՄԻԱՎՈՐՎԱԾ 0.03446 ՀԱ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով՝ Սմբատ Մամիկոնի Բաղդասարյանի կողմից ներկայացված դիմումը՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Միլիոնի փողոց թիվ 99 միավորման արդյունքում առաջացած 0.03446 հողամասի սահմանային չափերը և մակերեսը ճշտելու, հողամասի գործառնական նշանակությունը փոխելու խնդրանքը, Ստեփանավան համայնքի ղեկավարի 26.12.2023թ. թիվ 977 որոշումը, 31.07.2008թ. թիվ 2483672 սեփականության իրավունքի վկայականը, 16.04.2019թ. թիվ 16042019-06-0057 անշարժ գույքի նկատմամբ իրավունքերի պետական գրանցման վկայականը, 26.11.2014թ. թիվ 26112014-06-0018 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրացման վկայականը «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված հատակագիծը, Ստեփանավան քաղաքի գլխավոր հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ճշտել և հաստատել մարզ Լոռի համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Միլիոնի փողոց թիվ 99 հասցեում գտնվող, միավորված հողամասի սահմանային չափերը և մակերեսի չափը համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի և ճշտված սահմանային չափերով 0.03446

հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Սմբատ Մամիկոնի Բաղդասարյանի սեփականության իրավունքը:

2. Փոփոխված համարել ճշտված սահմանային չափերով և 0.03446 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:
3. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29,04.2021թ. կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին թիվ 698-Ն որոշմամբ սահմանված կարգի ճշտել և հաստատել նշված հասցեի հողամասի սահմանային չափերը և մակերեսի չափը համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային Ստորաբաժնում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«02» փետրվարի 2024 թվականի N 78

ՀՀ ԼՈՒՌԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆՔ. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Գ. ՆԺԴԵՇԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՌԻՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՏԵՄ ՀՐԱՀԱՏԻ ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ101.6 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽԱՆՈՒԹԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտեմ Հրահատի Աբրահամյանի կողմից ներկայացված դիմումը, 16.12.2019թ. N16122019-06-0045 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, համայնքի ղեկավարի կողմից տրամադրված 14.12.2023թ. թիվ 9 ավարտական ակտը(շահագործման թույլտվությունը), ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 26 մայիսի 1998 թվականի 108-Կ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 հունիսի 2017թ. թիվ 757-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

- Ստեփանավան քաղաքի Գ. Նժդեհի փողոց թիվ 6 հասցեի 0.01935 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված և 16.12.2019 թվականին պետական գրանցում ստացած 101.6 քմ ներքին մակերեսով խանութի գործառնական նշանակությունը փոխել առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ գործառնական նշանակության:
- Շինության գործառնական նշանակությունը փոփոխված է առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտ գործառնական նշանակության, քանի որ վերը նշված 101.6 քմ մակերեսով շինությունը հանդիսանում է համայնքի ղեկավարի կողմից հաստատված

քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն կառուցված առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտի մաս:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 79

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1, 3, 4 ԵՎ «ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ»
ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ, «ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ» ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ,
ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄ ՄԵԿ ԱՆՁՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ**

Հիմք ընդունելով «Ստեփանավանի հաշվապահական հաշվառում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի առ 05.02.2024 թվականի դիմում-զեկուցագիրը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավանի թիվ 1, 3, 4 և «Ամալյա Կարապետյանի անվան» թիվ 5 մանկապարտեզներ, «Սոս Սարգսյանի անվան մշակույթի պալատ», մանկապատանեկան մարզադպրոց, արվեստի դպրոց և կենտրոնական գրադարան համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար տնտեսական ապրանքների և սանհիգիենիկ նյութերի ձեռքբերման գնման գործընթացը յուրաքանչյուր համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար կազմակերպել առանձին՝ մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 80


**ՍԵՐՅՈՒԺԱ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՋՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ**

Ստեփանավան համայնքի վարչական տարածքում Սերյոժա Հովասափյան անհատ ձեռնարկատերը 2024 թվականի փետրվարի 05-ին հայտ է ներկայացրել համայնքապետարան իր ձեռնարկատիրական օբյեկտում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 08.04.2022թ. «Ստեփանավան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» թիվ 29-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 111/2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Սերյոժա Հովասափյանի հայտը բավարարել և նրան տալ իր դիմումի համաձայն 0.8 քմ մակերեսով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 01.02.2024-29.02.2024թթ. ժամանակահատվածի համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 81

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՆԱ ՓԱՓԱԶՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԱՅԻՆ
ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Աննա Փափազյանի 2024 թվականի փետրվարի 02-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Սուրբ՝ Նշան փողոց թիվ 10 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Աննա Փափազյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ակոհողային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2024-31.03.2024թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


«06» փետրվարի 2024 թվականի N 82

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԼԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կարլեն Հարությունյանի 2024 թվականի փետրվարի 01-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 14-1/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Կարլեն Հարությունյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ակոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2024-31.03.2024թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 83

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿԱՐԼԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՇՈՒՄՅԻՆ
ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կարլեն Հարությունյանի 2024 թվականի փետրվարի 01-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ որոշում եմ.

- Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 88 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Կարլեն Հարությունյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2024-31.03.2024թթ.:
- Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
- Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 84

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԵՆ ՍԱՔԱՆՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արմեն Սաքանյանի 2024 թվականի հունվարի 31-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Դեսինի փողոց թիվ 69 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Արմեն Սաքանյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2024-31.03.2024թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գույքի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynpetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 85

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՆՅԱԿ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՇՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մանյակ Ավագյանի 2024 թվականի փետրվարի 05-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Գ. Նժդեհ փողոցի թիվ 19^ա հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Մանյակ Ավագյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2024-31.03.2024թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քննարկող Լ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՎԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի •
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 86

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱՐԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՆՈԱՅԻՆ
ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նարինե Կիրակոսյանի 2024 թվականի փետրվարի 05-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով և Ստեփանավան համայնքի ավագանու 23.01.2024թ. թիվ 03-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Ստեփանավան համայնքի Սուրբ Նշան փողոց թիվ 50 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Նարինե Կիրակոսյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ակոհողլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն ընթացիկ տարվա առաջին եռամսյակի համար՝ 01.01.2024-31.03.2024թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հ. Մովսիսյանին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 87

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 02.10.2023 ԹՎԱԿԱՆԻ
ԹԻՎ 707 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ, հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

- Վահագն Հրանտի Ղազարյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին 02.10.2023թ. թիվ 707 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«06» փետրվարի 2024 թվականի N 88

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02.10.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 705 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ **որոշում եմ.**

Սերյոժա Էրեգլոյի Գոքորյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին 02.10.2023թ. թիվ 705 որոշման /այսուհետ՝ Որոշում/ վերնագրի 1-ին տողում գրված «Էրեգլոյի» հայրնունը փոխարինել «Վալերիկի» հայրանունով և այն շարադրել հետևյալ կերպ՝ «Սերյոժա Վալերիկի Գոքորյանից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին»: Որոշման 1-ին պարբերության 2-րդ տողում գրված «Էրեգլոյի» հայրնունը փոխարինել «Վալերիկի» հայրանունով և այն շարադրել հետևյալ կերպ՝ «2023 թվականի մայիսի 19-ի դրությամբ սեփականության իրավունքով Ստեփանավան համայնքի տարածքում քաղաքացի Սերյոժա Վալերիկի Գոքորյանի անվամբ գրանցված HYUNDAI SONATA 2.4 մակնիշի, 36NO419 հաշվառման համարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գումարը կազմում է 208825 /երկու հարյուր ութ հազար ութ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ, որից գույքահարկի ապառք՝ 174167 /հարյուր յոթանասունչորս հազար հարյուր վանթսունյոթ/ ՀՀ դրամ, գույքահարկի տույժ՝ 34658 /երեսունչորս հազար վեց հարյուր հիսունութ/ ՀՀ դրամ»:

Որոշման 3-րդ պարբերության 4-րդ տողում գրված «Էրեգլոյի» հայրնունը փոխարինել «Վալերիկի» հայրանունով և այն շարադրել հետևյալ կերպ՝ «Հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 2023 թվականի մայիսի 30-ին հրավիրվել են վարչական

վարույթի լուսմներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է քաղաքացի Սերյոժա Վալերիկի Գոքորյանը: Վերջինս չի ներկայացել վարչական վարույթի լուսմներին»:

Որոշման 1-ին կետի 1-ին տողում գրված «Էրեգլոյի» հայրնունը փոխարինել «Վալերիկի» հայրանունով և այն շարադրել հետևյալ կերպ՝ «Քաղաքացի Սերյոժա Վալերիկի Գոքորյանից հոգուտ Ստեփանավան համայնքի բյուջե գանձել՝ 208825 /երկու հարյուր ութ հազար ութ հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ, որպես փոխադրամիջոցի գույքահարկի գումար»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» փետրվարի 2024 թվականի N 89

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0110-0013
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՎԻՐԱՀԱՅՈՑ ՄԱՅՐՈՒՂԻ ԹԻՎ 16/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ
ՔՈԹԵՋԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0.02332 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏԱԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԽԱԼԱԹՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Արտակ Արտավազդի Խալաթյանի կողմից՝ ըստ 12.07.02023թ. կազմված լիազորագրի, լիազորված անձ Մալվինա Շաքարի Աթաբեկյանի կողմից 25.12.2023թ. ներկայացված թիվ Ա-1376 դիմումը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 25.01.2024թ. թիվ Կ-25012024-06-0216 որոշումը, համայնքի ղեկավարի 11.01.2024թ. թիվ 36 որոշումը, թիվ 763-20231121-2-7488841 նոտարական ակտի կողմ, 21.11.2023թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, 20.06.2016թ. թիվ 20062016-06-0025 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Արտյոմ Սաքանյան» ԱԶ-ի կողմից 21.12.2023թ. կազմված հատակագիծը, և այն հանգամանքը, որ քոթեջի և ավտոտնակի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.02071 հա հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում և ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 62-րդ հոդվածի 3-րդ կետով, 59-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 3-րդ կետի «է» ենթակետով, ՀՀ կառավարության 08.05.2003թ. թիվ 714-ն որոշման է կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, 26.05.1998թ. 108-Կ հրամանով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն

որոշումը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ըստ 29.04.2005թ. թիվ 1099834, 20.06.2016թ. թիվ 20062016-06-0025 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականներով պետական գրանցում չի իրականացվել հողամասի և ավտոտնակի նկատմամբ: Իսկ քրթեջի նկատմամբ կատարվել է պետական գրանցում և տրամադրվել է թիվ 20062023-06-0005 վկայականը, որի հիման վրա տրամադրվել է նաև միասնական տեղեկանք՝ առանց լրացուցիչ նշումի, առանձին կանգնած քրթեջի հողամասի նկատմամբ պարտադիր պետական գրանցման մասին և դրա հիման վրա նոտարի կողմից հաստատվել է առուվաճառքի պայմանագիրը:
2. Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի հիմքերի վերականգնման մասին 11.01.2024թ. թիվ 36 որոշումը, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումը, 21.11.2023թ. թիվ 763-20231121-2-7488841 նոտարական ակտի կողով, անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը ճանաչել 06-007-0110-0013 կադաստրային ծածկագրի տակ գտնվող, քրթեջի սպասարկման համար նախատեսված, բնակավայրերի նպատակային նշանակության 0.02332 հա մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ Արտակ Արտավազի Խալաթյանի սեփականության իրավունքը՝ և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված 24.30 քմ մակերեսով ավտոտնակի նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի,
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» փետրվարի 2024 թվականի N 90

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ
44/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-007-0265-0012 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԹԱՄԱՐԱ
ՍՏՅՈՊԱՅԻ ՎԵՋԻՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ
ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Թամարա Ստյոպայի Վեգիրյանի կողմից 16.11.2023թ. ներկայացված թիվ Վ-1132 դիմումը՝ ՀՀ Լոռու մարզի համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Հ. Ավետիսյան փողոց թիվ 44/1 հասցեում գտնվող 2017 թվականին ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու մասին խնդրանքը, 30.06.2016թ. N 30062016-06-0013 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱԶ-ի կողմից 05.09.2023թ. կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 18.09.2023թ. թիվ 2023ՅՂԶԻԶ Ծածկագրով տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը և 25.08.2023թ. կազմված ինքնակամ կառույցների հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ և ՀՀ կառավարության կադաստրային հատակագծերում և կադաստային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել՝ 06-007-0265-0012 կադաստրային ծածկագրով, ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Հ. Ավետիսյան փողոց թիվ 44/1 հասցեում գտնվող հողամասի մակերեսը 0.12636 հա և սահմանային չափերը համաձայն «Գագիկ Մեսրոպյան Վլադիմիրի» ԱԶ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծի:

2. Օրինականացնել Թամարա Ստյոպայի Վեգիրյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-007-0265-0012 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.12636 հա ուղղված մակերեսով հողամասում ինքնական կառուցված, բնակելի տունը՝ 17.85 քմ ներքին մակերեսով, աստիճանավանդակը՝ 12.36 քմ ներքին մակերեսով, բաց պատշգամբը 77.16 քմ ներքին մակերեսով, աստիճանավանդակը 0.97 քմ ներքին մակերեսով, ծածկը՝ 15.45 քմ ներքին մակերեսով և պարիսպները՝ ընդհանուր 16.78 քմ մակերեսով:
3. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 17.85 քմ ներքին մակերեսով բնակելի տան համար 29864 /քսանինը հազար ութ հարյուր վաթսուներկու/ ՀՀ դրամ, 12.36 քմ ներքին մակերեսով աստիճանավանդակի համար 20679 /քսան հազար վեց հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ, 77.16 քմ ներքին մակերեսով բաց պատշգամբի համար 129090 /մեկ հարյուր քսանինը հազար ինսուսուս/ ՀՀ դրամ, 0.97 քմ ներքին մակերեսով աստիճանավանդակի համար 1623 /մեկ հազար վեց հարյուր քսաներեք/ ՀՀ դրամ, 15.45 քմ ներքին մակերեսով ծածկի համար 25848 /քսանհինգ հազար ութ հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ և 16.78 քմ մակերեսով պարիսպների համար 28073 /քսանութ հազար յոթանասուներեք/ ՀՀ դրամ:
4. Ընդամենը վճարվելիք գումարը կազմում է 235177 /երկու հարյուր երեսունհինգ հազար մեկ հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ: Ինքնական կառուցված շինությունների օրինականացման համար նախատեսված գումարը, վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
5. Հողամասի սահմանները և հողամասում առկա շինությունների տեղադիրքերը որոշվում են «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱԶ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի համաձայն:
6. ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Հ. Ավետիսյան փողոց 44/1 հասցեում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Հ. Ավետիսյան փողոց 35:
7. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժնում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» փետրվարի 2024 թվականի N 91

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 09.01.2024 Թ. N 17 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

